26.339

„Եթե տեսա դուրս է գալիս, որ այնպես, ինչպես ասխատում են մեր Բեզենչուկի ընկերները, այնպես, ինչպես պայքարում են նրանք իրենց կոլխոզները ամրապնդելու համար, այնպես էլ պետք է ասխատենք մենք բոլորս, ամեն մի ազնիվ կոլխոզնիկ։ (Համաժիութ. հարվածային կոլխոզնիկների համագումարի դիմումից)։

ՄԻՋԻՆ ՎՈԼԳԱՅԻ ԲԵԶԵՆՉՈՒԿԻ ՄՏԿԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱՅՈՆԻ ԿՈԼԽՈԶՆԻԿ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻՆ

334.6
Մ-73

1933

ЗАРЯ ВОСТОКА

334·6
Մ-73
01 JUL 2013
26.339
05 JAN 2010

ՄԻՋԻՆ ՎՈԼԳԱՅԻ ԲԵԶԵՆՉՈՒԿԻ ՄՏ ԿԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱՅՈՆԻ ԿՈԼԽՈԶՆԻԿ – ՀԱՐ ՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԸՆԿ ՍՏԱԼԻՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ *)

Թանգագին բարեկամ և ընկ. Ստալին։

Ցերբ մենք կարդացինք կոլխոզնիկ հարվածայինների համամիութենական համագումարում արտասանած ձեր ճառը, որտեղ դուք հոչակել էյիք նաև ձեզ գրած մեր նամակը, ուզում էյինք իսկույն ձեզ պատասխանել։ Սակայն մի փոքր մտածելուց հետո, մենք վճռեցինք սպասել ցանքի ավարտելուն։ Այժմ մենք ուզում ենք ձեզ հայտնել, որ մենք գարնանացանն ամբողջովին ավարտել ենք մայիսի 12-ին։ Ցանել ենք 35·000 հեկտար, անցյալ գարնանից 2·000 հեկտարով ավելի։ Ցեղանակները չեղան նպաստավոր, բայց և այնպես մենք շատ շուտ ավարտեցինք ցանքը։ Առանձին կոլխոզներ ցանքն ավարտել են մինչև մայիսի 1-ը և 4-ը։ Մինչև 12-ը ցանեցին բոլորը։

Ցանքային տարածությունը, մեզ աջողվեց ընդարձակել ավելի կարճ ժամկետներում, որ-

*) Հրապարակված է ,,Պրավդա'' թերթում և հաղորդված ԱՀՊ մեջոցով կրճատած ձևով։

բովհետև մեր կոլխոզները պետք են ավելի լավ կազմակերպել աշխատանքը: Բրիգադները ամրապնդվել են, ամեն մի բրիգադ ունի իր պլանը, իր հողը, մշտական մարդիկ: Բրիգադիրները ընտրվել են ավելի լավ, նրանք ավելի են փորձվել, մենք բոլորս էլ մի տարով մեծացել ենք, ավելի փորձվել:

Այդ նշանակո՞ւմ է, արդյոք, թե մեզ մոտ կոլխոզներում յոդրության դեմ մղվող պայքարն արդեն ավարտվել է: Վոչ, դժվան պայքարը դեռ հարկավոր է: Ցանքի առթիվ մեզ մոտ առաջ եկավ վորակի համար մղվող պայքարի մի ուրիշ ձև ևս՝ փոխադարձ աուդիտը: Այժմ, յեթե մեկն առաջ է անցնում, դա իրոք աշխատանքի բարձր տեմպերի և վորակի համար է լինում: Կոլխոզնիկները հետզհետե սկսում են հասկանալ իրենց անձնական շահերի սերտ կապը կոլխոզի շահերի հետ:

Ներկա տարին վորակի տեսակետից մենք համարում ենք բեկման տարի: Դուք ճիշտ ասացիք, ընկեր Ստալին, վոր առաջիկա յերկու-յերեք տարում բոլոր կոլխոզնիկները կարող են դառնալ ուժեղ: Ձեր այդ լոզունգը մեծ ուրախություն և աշխուժություն մտցրեց մեր սրտերի մեջ: Ցերբ մենք սկսեցինք քննել ձեր ճառը և հայտնել մեր տպավորությունները, այն ժամանակ դեռ չջախջախված կուլակները տարածում էին այսպիսի լուրեր՝ թե բոլշևիկները նրբահամար են ուզում ձեզ ունևորդարձնել, վոր պետի հետո ապակուլակացնեն, ինչպես մեզ ապակուլակացրին: Սակայն այդ ագիտացիան մեր մեջ միայն ծիծաղ շարժեց:

Ճիշտն ասած, մենք հույս ունենք, ընկեր Ստալին, ունևոր դառնալ վոչ թե յերկու-յերեք տարի հետո, այլ մոտակա մեկ – յերկու տարում:

Մենք այս տարի ցանել ենք բացառապես զտված սերմեր, մտցրել ենք խոտացանման գիտական ցանքաշրջանառություն: Այժմ մենք ըստ ամենայնի կարող ենք հաշվի առնել ագրոնոմիական գիտության և տեխնիկայի ցուցումները: Մեր կոդմերում կոլեկտիվացումից առաջ ագրոնոմները տասնյակ տարիներ քարոզում էին խոտ ցանելը և ապացուցում էին դրա ոգուտը, բայց մուժիկները շատ դժվարությամբ էին համաձայնում: Կուլակներն ավելի լավ էին համարում շահագործել եժան բանվորական ուժը և վարել գիշատիչ տնտեսություն, իսկ միջակ և չքավորն իրենց հողի փոքրիկ կտորով խոտերի և գիտական փորձերի գլուխ չունեին: Իսկ այժմ մեզ մոտ կուլտուրական խոտերով ցանված են հազարավոր հեկտարներ: Այժմ գիտության և սոցիալիստական դաշտերի միջև արգելք չկա:

Մեր բարեկեցության արագ աճման գործում մեզ հավատ ներշնչողը – դա կուսակցության Կենտկոմի և կառավարության վորոշումն է հացը պետությանը հայթայթելու մասին: Այդ վորոշման մեջ գլխավորն այն է, վոր նա կոլխոզի ամբողջ տնտեսական կյանքը դնում է ամուր

ոլորների վրա։ Վաղորոք կարելի է ամեն ինչ հաշվել և նախատեսել։ Պլաններն ավելի ռեալ և պարզ են դառնում։ Այժմ յոթնամյա վատ ես աշխատել, ուրիշին չես կարող մեղադրել, այլ միայն ինքդ քեզ։ Այդ վերջնումը չատ է վոգևորում առաջավոր կոլխոզներին և շատ ոգնում է յեռամնացներին։

Դուք կոլխոզնիկ հարվածայիններին համագումարում շատ ճիշտ ասացիք, որ այժմ ամեն ինչ կախված է մեզանից։ Վերպեղի դառնանք ունևոր և դարձնենք կոլխոզներն ամրակուռ, բուշևիկյան, պահանջվում է մի բան՝ աշխատել ազնվաբար, բաժանել կոլխոզային յեկամուտները ըստ աշխատանքի, պահպանել կոլխոզային բարիքը, կատարել մեր բանվորա – գյուղացիական կառավարության առաջադրանքները և կոլխոզներից դուրս վռնդել այնտեղ սողոսկած կուլակներին և յենթակուլակներին։ Պայմանը հասարակ է և պարզ։ Սակայն նա մեզ մոտ ամեն տեղ չի կատարվում։ Ինչո՞ւ։ Մենք շատ անգամ ենք մտածել այդ մասին և դառնում ենք միայն մի բան – մասնավոր սեփականատիրական սովորությունները։ Հեշտ չէ բաժանվել սարկական սովորություններից, որոնք կազմակերպվել են դարերով։ Այդ սովորությունները – հին ձևով ապրելը և մեկը մյուսի վոխերիմ թշնամին եր, այդ սովորությունները դեռ ևս պահպանվում են կոլխոզներում։ Հենց դրանց վրա է հիմնվում կուլակը։ Հիրավի, ի՞նչպես կարող ե մեզ լուրջ վնաս հասցնել և խոչընդոտ հանդիսանալ կուլակը, որին մենք ջարդեցինք և ջարդ ու փչուր արինք։ Մենք կարծում ենք՝ հենց այն պատճառով, որ նա հենվում է սեփականատիրական այդ հին սովորությունների վրա, որոնք դեռ չեն վերացվել կոլխոզնիկների կողմից։ Հարկավոր է ճեղ ասել, որ կուլակը դեռ վայր չի դրել զենքը։ Վոչ, կուլակը սոսկալի դիմադրություն ե ցույց տալիս։ Մենք խփում ենք նրան ճակատից, իսկ նա փորձում է մեր թիկունքն անցնել։ Կուլակը բաց չի թողնում վոչ մի դեպք՝ վնասելու կոլխոզին։

Վոչ, կոլխոզներում դեռ ամբողջովին չեն վերացվել հին սեփականատիրական սովորությունները։ Սակայն վերադարձ չկա դեպի հինը։ Վերադառնալ հնին, – դա նշանակում է վոչ միայն վերադառնալ կոլխոզից դեպի կուլակային սարկություն, դեպի կալվածատերը – կապիտալիստը։ Կոլխոզում գյուղացին արդեն ամուր է կանգնած, կոլխոզից վոչ վոք չի հեռանում։ Ընդհանրապես, մենք ունենք մենատնտեսների ահագին ձգտում դեպի կոլխոզները։ Այս գարնանը ՄՊՖՎ անվան կոմունային տրվել է 460 դիմում մենատնտեսների կողմից, Հ. 2 «Գիգանտ»-ին տրվել է 100 դիմում, Կոմինտերնի անվան կոլխոզին՝ 100 դիմում և այլն։

Կոլխոզնիկներն իրենք ավելի ու ավելի յեն սկսում հասկանալ մի հասարակ ճշմարտություն, – ամեն ինչ կախված է մեզանից։ Դա

արդեն անդրադարձավ ներկա գարնանացանի արդյունքների վրա։

ՄՏ կայանի քաղաքաժինն ահագին ոգնություն ցույց տվեց Գանուևկային, ինչպես և մեր բոլոր կոլխոզներին։ Ցեթե մենք անցյալ նամակում չնորհակալություն էլինք հայտնում ձեզ և բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեին, ՄՏ կայաններին կից քաղաքաժիններ կազմակերպելու մասին՝ վերոյման համար, մենք այդ անում էլինք այն պատճառով, որ զգում էլինք քաղաքից–կուսակցության կողմից անմիջական ոգնության անհրաժեշտությունը։ Մենք հասկանում էլինք, որ քաղաքաժինները բերում են մեզ այդ ոգնությունը։ Առաջին նամակից հետո անցած ժամանակամիջոցում, մենք հնարավորություն ունեցինք համոզվելու գործով, թե ինչ ահագին նշանակություն ունի քաղաքաժինը մեզ համար։ ՄՏ կայանը քաղաքաժինի հետ, – այդ բոլորովին ուրիշ կազմակերպություն է։

Առաջին՝ քաղաքաժինը ոգնեց մեզ զսել կոլխոզները խորթ և այլասերվող տարրերից և հաղթահարել կուլակային դիմադրությունը ցանքին։ Սակայն քաղաքաժնի աշխատանքը դրանով չսահմանափակվեց։ Չկա կոլխոզի կյանքի մի այնպիսի կողմ, ուր չթափանցեր քաղաքաժինը, և ամենուրեք նա թողնում է իր ազդեցությունը։ Այդ զգացվեց մեկեն։ Այժմ կոլխոզներում առաջ տեկող նախաձեռնությունն իրացվում է քաղաքաժնի միջոցով։ Այժմ մարդիկ ամեն

գործով գնում են քաղաքաժին։ Հենց յերեկ «Կոմունիզմի ուղի» կոլխոզնիկուհիները յեկան քաղաքաժին և հորդորեցին նախագահի վատ աշխատելու մասին։ Նրանց հետ կոլխոզ մեկնեց քաղաքաժնի պետը, ստուգեց ամեն ինչ, իրոք հարկ յեղավ վերընտրել նախագահին և նույնիսկ վտարել կուսակցությունից։

Մեր կոմունիստները, թող նրանք չնեղանան, իրենց կոչման բարձրությունը վրա միշտ չենլինում։ Այժմ քաղաքաժինը նրանց վեչից քաշեց։ Կենդանացավ կոլխոզային բջիջների աշխատանքը։ Նրանք ընդհուպ զբաղվեցին արտադրությամբ։ Ամեն մի բրիգադում կա կուսակցական կազմակերպիչ։ Կոմունիստի հեղինակություն կոլխոզում աճեց։ Նրանք արտադրության մեջ առաջ են գնացել։ Քաղաքաժնի աշխատանքում մենք առանձնապես պարզ կերպով զգացինք կուսակցության անմիջական ոգնությունը, հավատարիմ ձեռքը։ Մենք գտնում ենք, որ ՄՏ կայանը քաղաքաժինների ոգնությամբ ել ավելի կդառնա կոլխոզային շինարարության կազմակերպող, տնտեսական կենտրոնը։ Մենք յավ հասկանում ենք, որ այդ հարցերը կարելի յե վճռել, հաշվի առնելով վոչ միայն մեր Բեզենչուկի ՄՏ կայանի և մեր քաղաքաժնի փորձը։

Մենք ավարտեցինք ցանքը։ Սակայն դրանով չենք ուղում բավականանալ։ Մեր առաջ դեռ շատ աշխատանք կա։ Նախ և առաջ հարկավոր է ցել անել, որին մենք արդեն ձեռնա-

մուխ ենք տեղել։ Մայիսի վերջին հույս ու նենք ավարտել ցելը։

Միաժամանակ կսկսենք շարքացան բուլսե-ի քաղհանը, իսկ ուր հարկավոր է՝ նաև հաս-կերավոր բուլսերինը։ Նախորդք կպատրաստ-վենք բերքահավաքին։ Անտարակույս՝ մենք բերքահավաքը կկատարենք ավելի կազմակերպ-ված, քան անցյալ տարի։ Սակայն գլխավորն այն է, որ հարկավոր է այժմ ամենքս անել, որ վոչ մի հացահատիկ դուրս չկորչի։

Վերջում շնորհենք ձեր ուշադրությունը մեր առաջին նամակի առթիվ։

Դուք ասացիք, որ մենք թերագնահատել ենք շարքային կոլխոզնիկի աշխատանքը։ «Գործարանները և ֆաբրիկաները, շախտաները և յերկաթուղիները, կոլխոզները և սովխոզները առանց ալմուկի կառուցող, կյանքի բոլոր բա-ղիքները ստեղծող, ամբողջ աշխարհին կերա-կրող և հագցնող բանվորներ և գյուղացիներ, — ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոս-ները և ստեղծագործողները», ասացիք դուք,— և դրան մենք միանգամայն համաձայն ենք։ Մենք իրոք թույլ տվինք սխալ։ Աշխատելով ամեն որ փոքր գործում, մենք դրանով իսկ մասնակցում ենք սոցիալիզմի մեծ շինարարությանը։ Մենք Խորհրդային Միության բոլոր բանվորների և կոլխոզների հետ միասին վերակառուցում ենք կյանքը, փոփոխության ենք յենթարկում մեզ։ Սակայն մենք հաճախ չենք նկատում այն մեծ

փոփոխությունները, որոնք տեղի յեն ունե-նում ամեն քայլափոխում։

Զե՞ որ, յեթե համեմատելու յինենք մեր գյուղերը, նույնիսկ արտաքուստ, ինչպիսի տեսք ունեն նրանք այժմ և ինչպիսի տեսք ունեցին հինգ տարի առաջ, տարբերությունը մեծ է։

Գյուղում առաջ են յեկել նոր չտեսնված շենքեր՝ կոլխոզային սխոսներ, անասնաբակեր, խոզանոցներ, մեքենաներ, նոր դպրոցներ, ման-կամսուրներ։ Մարդիկ սկսել են աշխատել և ապ-րել նոր ձևով, իրերին ցույց են տալիս նոր վե-րաբերմունք։ Մարդիկ ել փոխվել են։ Գյու-ղում յերբեք չեն յեղել այնքան դրագետ մար-դիկ, որոնք կարողանային ջոկել բարդ հաշիվ-ները, պլանները։ Ցեվ ի՞նչ ձգտում դեպի ու-սումը։ Գրագիտությունը, ուսումը դարձել են անհրաժեշտություն։ Իրենց գոյության մի քա-նի տարում կոլխոզները արդեն տվել են իրենց չարքերից բավական ընդունակ, գործարար կո-մունարներ, կուլտուրական գործառներ։ Նը-րանք տվելի յեն շատանում, նրանք չարունակ աճում են։

Գյուղական կինը աննախընթաց բարձրու-թյան հասավ։ Կանանց մեջ կան կոլխոզների ղե-կավարներ, բրիգադիրներ, տրակտորիստներ, մեխանիկներ։ Այո, մենք կառուցում ենք մեծ կյանք և մեր գործի ամբողջ վեհությունը միշտ չենք նկատում։

Ըստ ամենայնի ընդունում և հավանու-թյուն ենք տալիս ձեր ուղղումին մեր նամակի

աութիվ: Սակայն, ընկեր Ստալին, համաձայնվեցեք նաև մեր ուղղման հետ: Բանվորները և գյուղացիները առանց աղմուկի, մեծ, հերոսական գործ են կատարում: Սակայն նրանք այդ անում են լենինյան կուսակցության ղեկավարությամբ, ձեր, ընկեր Ստալինի, ղեկավարությամբ: Մենք չպետք է նվազեցնենք և չենք ուզում նվազեցնել ղեկավարության մեծ ուժը և նրա հեռատեսությունը: Մենք ղգում ենք նրան ամենօրյա աշխատանքի մեջ: Մենք տեսնում ենք, թե նա մեր առաջ ինչ ուղիներ է հարթում:

Մեր հեղափոխության վեհությունը կայանում է նաև նրանում, որ հեղափոխությունը ղեկավարության քաջեց այնպիսի հսկաների, ինչպիսին է Վլադիմիր Իլյիչ Լենինը, ինչպիսին եք դուք, նրա ամենահավատարիմ դինակիցը և շարունակողը: Այդ մեր մեծ պարծանքն է:

Ուրեմն թույլ տվեք, թանգագին բարեկամ և ընկեր Ստալին, ցանկալ ձեզ յերկար տարիներ լավ առողջություն: Առջևում աշխատանք և պայքար դեռ շատ կա:

Այնուհետև գալիս են ստորագրությունները:

Краснознаменная типография им. Мясникова. Закпартиздата.

Заказ № 1471 Уполн. главлит №—А 369 Тираж 1500

ՀՀ Ազգային գրադարան
NL0205370

269/433

628